

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ս. ԿԱՐԱՊԵՏ

•

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Սիւնիաց նահանգի
Երնջակ գաւառին մէջ կը գտնուի Ս. Կարապետի վանքը, Ապրակունիք գիւղին ա-
րեւմտեան կողմը, կէս քիլոմէթր հեռաւո-
րութեամբ, Շրջապատուած էր հողաշէն
պարիսպով: Եկեղեցին կառուցուած է յա-
նուն Ս. Յովհաննէս Կարապետի, որուն
աջը կը կազմէր վանքին գլխաւոր սրբու-
թիւններէն մին. — Սիսական, էջ 378:
Սմբատեանց, Երնջակ, էջ 1: Բնաշխար-
հիկ Բառարան, Ա. էջ 685:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Ս. Կարապետի վանքը
պատմութեան մէջ երեւիլ կը հանդիսանայ
Ժէ. դարու կէսէն սկսեալ, երբ հիմնական
վերաշինութեամբ կը զստնայ Երնջակ գա-
ւառի գլխաւոր մենաստանը: Վանքին վա-
նասին ընդարձակօրէն դրած է Մեսրոպ Արք.
Սմբատեանց: Այդ վանհայրերուն գաւա-
ղանը կը կազմուի այսպէս, զանց ընելով
նորագոյնները:

1. — Եսայի Եպս. Մեղրեցի, Կարճա-
ւանցի, 1639-+66. — Աշակերտ Փիլիպ-
պոս Կաթողիկոսի, որուն կողմէ առաջնորդ

որ Աստուծոյ հաճոյ և մարդկան գրեաց⁽¹⁾
առ իս վաղվազակի, և զթուխթն իմ ետու
բերիւ առ քեզ կնքով և ի վերոյն չգրեցի,
մինչև ուսանիմ ի քէն թէ որպէս են կամք
քո առ իս, և կնքեցի զթուխթն իմ խաչիւ
ի վերուստ:

Ն. ԵՊՍ. ԵՌՎԱԿԱՆ

(1) Եւ աւելի, Զուլի Գ:

(2) աւետարանն, ԲԴ:

(3) Զեա, Զուլի Բ:

(4) առէ, Դ. առի, Բ:

(5) Ազէ կը սկսի Թղթոց Գրքի Բերի օրի-
նակը:

(6) Զա, Զուլի Ե:

(7) զիմ, ԲԴ Ե:

(8) Թէոգոսի, Ե:

(9) գրեցաւ, Ե:

կը կարգուի Ս. Կարապետի վանքին. Գոր-
ծակցութեամբ Ղազար Վարդապետի (+
1662) և ձեռամբ յոքնանար Դաւիթ վա-
պետի հիմնովին կը վերաշինէ Ս. Կարա-
պետի տաճարը, որուն նաւակատիքը կ'օրհ-
նուի 1653 Հոկտ. 17/ին. — Դաւրիժեցի,
էջ 347: Երնջակ, էջ 10, 118, 138, 149,
177, 285, 335, 339-40:

2. — Արիստակէս Բաբունցի, 1667?-+
1673. — Երնջակ, 53, 161-2, 332:

3. — Սիմեոն Վարդապետ, 1674?-+
1679. — Երնջակ, 332: Ա. Վրդ. Մեղրեցի,
Հնութիւնք Հայրենեաց, 1872, էջ 124:

4. — Մասթեոս Արք. Ապրակունցի, 1680?
-+1704. — Երնջակ, 179-80, 332: Սի-
սական, էջ 368:

5. — Սիմեոն Վարդապետ, 1704?-
1713? — Սիսական, էջ 355, 363:

6. — Մեսրոպ Վրդ. Նախիջևանցի,
1713?-20? — Այլազ Խօջայ Ծոօթեցի
շինել տուած է մատուռ մը Ս. Ստեփանոս
ի նուիրուած: Իր առաջնորդութեան շըբ-
ջանին իբրև իր հոգեծին գաւակները կը
յիշուին Նըխա, Յովհաննէս, Եսայի և Մի-
նաս վարդապետներ, ինչպէս նաև Մինաս,
Վարդան, Կարապետ, Գրիգոր, Սողոմոն,
Ղազար, Մխիթար և Յովհաննէս Բահանա-
նէր. — Երնջակ, 7, 40, 53: Էյմիածին,
1961, Զ. 60, է. 61:

7. — Եսայի Արքեպիսկոպոս, 1738. —
Երնջակ, 429, 434:

8. — Մկրտիչ Եպս. Զանկեցի, 1740-
47. — Որդի Մկրտիչ Բահանայի և Եղբայր
Ղազար Կաթողիկոսի (1737-51), Իր նա-
խաձեռնութեամբ Ծոօթեցի Նաղաշ Յով-
նաթանի որդիները, յայտնի նկարիչներ Յա-
կոր և Յարութիւն, կը նկարազարդեն Ս.
Կարապետի սեղանը. — Երնջակ, 6, 114,
464-6:

9. — Մասթեոս Արքեպիսկոպոս, +1755.
— Երնջակ, 334:

10. — Կարապետ Վարդապետ, 1756-80.
— Նոյն, 54, 451-3, 458:

11. — Յովհ. Վրդ. Գաղեցի, 1781-+
1787. — Նոյն, 459, 461:

12. — Կարապետ Եպիսկոպոս, 1787-+
94. — Նոյն, 462, 463:

13. — Մեսրոպ Վրդ. Փորաղասեցի,
1800. — Նոյն, 55:

14. — Մարկոս Վրդ. Նորաեկեցի, 1810. — Նոյն, 55:

15. — Ղազար Վարդապետ, 1813. — Նոյն, 55, 440:

16. — Մասթոս Արք. Տէր Ղուկասեանց, Զնաբերդցի, որդի Ալեքսանի և Նիկարի 1814—28. — Նոյն, 56, 193—4, 381, 449, 472, 475:

17. — Փիլիպպոս Սպալցեոսեցի, 1835. — Նոյն, 56:

18. — Կարապետ Վրդ. Գեթիկեցի, 1840. — Նոյն, 56:

Երկրաշարժը, 1840 Յունիս 20ին, կը քանդէ եկեղեցւոյ զանազատունը. — Նոյն, 15:

19. — Երեմիա Վրդ. Մելիք-Թանգեանց, 1850—1864. — Վանքին մէջ կը կատարէ ընդհանուր նորոգութիւններ և շինել կուտայ շարք մը սենեակներ. — Նոյն, 15, 40, 334, 347:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Ծ. Կարապետի Վանքին մշակութային գործունէութենէն քիչ արդիւնքներ ծանօթ են. այսպէս,

Ա. — Աստուածատուր Գրիչ, 1648—64. — Օրինակած է,

1. — Աստուածաբան, 1648ին, Զահեցի Միրզայի յիշատակին. — Երնջակ, էջ 269,

2. — Աղօթագիրք, 1664ին, ի վայելուձ Մելիքեթի. — Երնջակ, էջ 173:

Բ. — Մեսրոպ Վրդ. Խիզանցի, 1649ին, հոս կ'աւարտէ օրինակութիւնը Աւետարանի մը, որուն սկսած էր Ասպահանի մէջ. — Հանդ. Ամս. 1889, էջ 269:

Գ. — Տէր Շմաւոն Գրիչ, 1659—62. — Օրինակած է 1659ին մէկ Քարոզագիրք, Յովհաննէս Որոտնեցիի. — Կարինեան ծուցակ, Թ. 2148:

Նոյն Թուին նորոգած է 1603ին գրուած Աւետարան մը. — Երնջակ, էջ 215:

Դ. — Թադէոս Գրիչ, որդի Գրիգորի, 1666ին օրինակած է մէկ ձեռոց. — Երնջակ, էջ 240, 241, 316 (Յ. 132):

Ե. — Մեսրոպ Վարդապետ Գրիչ, 1701ին օրինակած է մէկ Հաւանց վարք, Ժողովածոյ Հայոց և Ֆռանդաց. — Երնջակ, էջ 118:

Զ. — Եսայի Վարդապետ, Գրիչ, 1713ին օրինակած է մէկ Դիոն, Արիսպագացի. — Էյմրածին, 1961, Գ. 61:

ԿԼՆՈՆԵԳԻՏԿԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Է.

ՈՐՈՐԻՆ Է ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ՅԱԼՈՒ ԻՐԱՌՈՒՆՎՈՐ

Բայց կ'երևի թէ վարդապետը ինքն իր բնութեան հետեանքով զեղծում անբու գոռ պիտի բանար շտաով. ուսումը անհետ, քարոզչութեան պաշտօնը իր անհամեմատելի հրապոյրն ունի, որ կրնար և կրնայ գեռ շատիւր գիտովցնել, այս շատիւր, որ առանց պատրաստութեան, միայն փառքի և ցոյցի համար պիտի ուզէին ունենալ Գաւազան և Աթու, Հնադոյն ժաւանակներու մէջ տեսանք արդէն թէ ի՞նչ զանգատներ կային և ի՞նչ միջոցներ ձեռք առնուած էին զեղծումներու և ապրկարութիւններու դէմ: Եւ այս դարուն մէջ ալ՝ երբ մէկ կողմէն այնքան արժանաւոր և փառաւոր գէմքերու կը հանդիպինք վարդապետական Աթուի վրայ, միւս կողմէն կը տեսնենք կանոններ և զանգատներ, որոնք անփառանակներու, անարժաններու բազմութիւնը կը շեշտեն: Այս զեղծումները, հաւանաբար կրկնելոյ, Կ. Պոլսի, Երուսաղէմի թեմերուն մէջ երևան եկած էին աւելի. այնպէս որ Փիլիպպոս Կթղ. 1651ին, իրաւապէմ մէջ, ուր 13 կանոններ հաստատեցին կրկնելոյ ներսէս կթղ.ին

Է. — Սամուէլ Վարդապետ, Գրիչ, 1718ին օրինակած է մէկ Սաղո, Երնջակի առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոսի պատուէրով. — Էյմրածին, 1961, է. 60:

Ը. — Շմաւոն Գրիչ, 1758ին օրինակած է մէկ Քարոզագիրք, Գրիգոր Տաթևացիի. — Երնջակ, էջ 316 (Յ. 222):

Թ. — Ղուկաս Վարդապետ, Գրիչ, 1802ին օրինակած է մէկ Հաւաքածոյ. — Երնջակ, էջ 140:

ՆՈՐԱԹՐ ԵՊՍ. ԵՈՒՎԱԿԱՆ